

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՀ-ՀԲՄԱՊՁԲ-22/20-3**

ք. Երևան

« 28 » սեպտեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը ի դեմս գործադիր տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Թեքսերվ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Շ.Աղաբաբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին :

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինել՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ «Օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 32,049,933.60 /երեսուներկու միլիոն քառասունինը հազար ինը հարյուր երեսուներեք դրամ և 60 լումա/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին: Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

5.5 Սույն պայմանագրի 5.1 կետում նշված հանձնման-ընդունման արձանագրության հաստատման օր է համարվում պատվիրատուի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու օրը:

ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող կազմակերպությունների համար Ապրանքի մատակարարման օր է հանդիսանում ներմուծվող ապրանքների ՀՀ մաքսային տարածքը հատելու օրը, որը սահմանվում է ապրանքները մաքսազերծելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատված հանձնման-ընդունման արձանագրությամբ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված

մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

«Հայաստանի հանրային
հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք
0011
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

/ստորագրություն/



ՎԱՃԱՌՈՂ

«Թեքսերվ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, Գ1
թաղամաս փ. 2, տ. 53
Բանկ՝ բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1570075047700100

/ստորագրություն/



	<p> <ul style="list-style-type: none"> • Երկու սնուցման արջուր պահուստավորման համար • Կրկնակի ստուգման օդափոխիչներ • Վթարային ազդանշաններ՝ կորպորաի ջերմաստիճանի, արտաթիչի սնուցման արջուրի PCU-ի խափանման, օդափոխիչի խափանման • LAN Patch վահանակներ առջեի եւ հետևի մասերում • Տեղափոխման առջևի բռնակները ծառայում են կանգնակում հեշտ տեղակայման և որոս հանման համար • Լիովին համատեղություն Clear-Corn V-Series Iris-ի, V-Series, iStation, ICS վահանակների և Agent-IC® շարժական վահանակների հավելվածի հետ <ul style="list-style-type: none"> • Փոխարինելի քարտ <p> օդափոխիչ/վթարային ահագանգման <ul style="list-style-type: none"> • Փոխարինելի սնուցման քարտ </p> <p> Համալարման և կառավարման համար EHX ծրագրային ապահովման աջակցություն </p> <p> Տեխնիկական բնութագրեր 0 dBu-ն վերաբերում է 0.775 Վ RMS-ին: </p> <p> Մատրիցայի հնարավորությունները Ընդարձակման պլատանների առավելագույն քանակը՝ 2 CPU պլատանների առավելագույն քանակը՝ առնվազն 1 (լրակազմում) Սնուցման արջուրների առավելագույն քանակը՝ առնվազն 2 (լրակազմում) MVX մատուցների նվազագույն քարտեր՝ առնվազն 1 </p> <p> Մատրիցայի բնութագրեր Դիսկրետիզացման հաճախականությունը՝ առնվազն 48 կՀց Լուծաչափ՝ առնվազն 24 բիթ Հաճախականային բնութագիճ՝ 48 կՀց դիկրետիզացիայի պայաններում՝ 30 կՀց կամ ավելի - 22 կՀց ± 3 dBu հաչաճն արավարումներ (հարակից կապուրի)՝ < -70 dBu Նոսիխալ մակարդակը՝ ոչ պակաս, քան 0 dBu Մատրիցայի պաշարը ըստ մակարդակի՝ առնվազն +18 dBu </p> </p>
ավելի շուտ	

3.	32321 210	24 սպեղներով վ V սերիայի վահանակ	24 սպեղներով V սերիայի վահանակ	Clear Com V24PDX4V-IP	<p>24 ստեղներով V սերիայի վահանակ 2U չափի, 24 սպեղներով V սերիայի վահանակը կապի կառավարման վահանակ է՝ XLR-4 mole ականջակայանների հարակցիչով, որն աշխատում է Eclipse և Eclipse HX թվային մագրիցային համակարգերի հետ համադրել: Վահանակն ունի գրաֆիկական էկրան՝ յուրաքանչյուր սեղմակոճակին 10 խորհրդանշանային պիկտոգրամների նշանակման հնարավորություն: Պիկտոգրամներ նշանակելու հնարավորության ընդլայնման նպատակով՝ վահանակն ունի 8 էջ պիկտոգրամներով: «Սագի վիզ» պիկտոմիկրոֆոնը (օրինակ՝ 110/340) և ականջակայանների միացման համար նախատեսված են հարակցիչներ: Յուրաքանչյուր օգտագործվող սեղմակոճակն ունի իր ձայնի մակարդակի կարգավորիչը (Ֆիզիկապես կարգավորիչը յուրաքանչյուր սպեղի կողքին է): Վահանակն օժտված է դիֆուզիոնի ֆունկցիայով՝ ձայնային հաղորդագրությունները ձայնագրման</p>	հատ	1,955,626.20	3,911,252.40	3,911,252.40	2	2	Ք. Էրևան, Գ. Հուլիս Եկոյան 26	2	1 տարի	Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երեք ամսվա ընթացքում /եթե մատակարարը չի համաձայնում մատակարարել ավելի շուտ
----	--------------	---	--------------------------------------	-----------------------------	--	-----	--------------	--------------	--------------	---	---	--	---	--------	--

	<p>Նպատակով: Վահանակի հերձնաստամ առկա են ձայնի և GPI/O լրացուցիչ մուտքեր/ելքեր: Վահանակը կարող է միացվել և անարգային ինտերֆեյսային քարտերին (օրինակ՝ MYX-A16), և IP միացումների միջոցով (IVC-32 քարտ)՝</p> <p>Տեխնիկական բնութագրեր</p> <p>Առջևի վահանակի կառավարման էլեմենտները և հարակցիչները Խոսես/Լսել Փոխանցատիչներ՝ 24 Ձայնի կարգավորիչներ՝ 2 (հիմնական և լրացուցիչ)</p> <p>Ավանջակայանների հարակցիչ՝ 1 (XLR-4M կամ XLR-5F)</p> <p>Վահանակի միկրոֆոնի հարակցիչ՝ 1 (3-pin)</p> <p>Վահանակի հետնամասի հարակցիչներ GPIO՝ DB-25F</p> <p>Մատրիցա՝ RJ45 (միակապողիանոց) Մատրիցա (IP): RJ45 (բազմակապողիանոց)</p> <p>Լրացուցիչ ատդիո՝ DB-25M Ընդարձակման վահանակ՝ RJ45 DC սնուցում՝ 4-pin DIN</p> <p>Ավանջակայանների լրակազմի ձայն Ավանջակայանների դիմարդությունը՝ սկսված 32 Ohm-ից</p> <p>Ելքային հզորությունը՝ 75 մՎտ 50 Ohm դեպքում <1% աղավաղման համար</p> <p>Բարձրախոս Հաճախականային քննությագիծ՝ 40<g - 20<g +/- 3դբ</p> <p>Վահանակի միկրոֆոնային մուտք Տեսակը՝ էլեկտրոն</p> <p>Մակարդակ՝ 40 - 70dBu Ինպեդնանս՝ 1700 Ohm +/- 10%</p> <p>Ավանջակալի միկրոֆոնի մուտք Տեսակը՝ դիմամիկ կամ էլեկտրոն</p> <p>Մակարդակ՝ -40 - 0dBu</p> <p>Հիմնական էլեկտրասնուցում (աբսոլյուտ) Լարումը՝ 100/240Վ AC +/- 10% Հաճախականությունը՝ 50 - 60 Հg Հզորությունը՝ առավելագույնը 50 Վտ</p>
--	---

4.	32321 210	12 սրբեղները վ սերիայի վահանակ	12 սրբեղներով V սերիայի վահանակ	Clear Com V12PDX4Y-IP	<p>/Clear Com V24PDX4Y-IP ի լրումն առկա Clear Com համակարգի/</p> <p>12 ստեղծերով V սերիայի վահանակ 12 սրբեղներով V սերիայի վահանակը կապի կառավարման վահանակ է՝ XLR-4 male ականջակալների հարակցիչով, որն աշխատում է Eclipse և Eclipse HX թվային մատրիցային համակարգերի հետ համարել: Վահանակն ունի գրաֆիկական էկրան՝ յուրաքանչյուր սերմակոճակին 10 խորհրդանշանային պիտակների նշանակման հնարավորություն: Պիտակներ նշանակելու հնարավորության ընդլայնման նպատակով՝ վահանակն ունի 8 էջ պիտակներով: «Սագի վիզ» տիպի միկրոֆոնը (օրինակ՝ I10/340) և ականջակալների միացման համար նախատեսված են հարակցիչներ: Յուրաքանչյուր օգտագործվող սերմակոճակն ունի իր ծայնի մակարդակի կարգավորիչը (ֆիզիկապես կարգավորիչը յուրաքանչյուր սրբեղի կողքին է): Վահանակն օժտված է դիկրոֆոնի ֆունկցիայով՝ ծայնային հարդարությունները ծայնագրման նպատակով: Վահանակի հետնամասում առկա են ծայնի և GPI/O լրացուցիչ մուտքեր/էլքեր: Վահանակը կարող է միացվել և անալոգային ինդերֆեյսային քարտերին (օրինակ՝ MYX-A16), և IP միացումների միջոցով (IVC-32 քարտ) Տեխնիկական բնութագծեր Առջևի վահանակի կառավարման էլեմենտները և հարակցիչները հոսել/Լսել Փոխանջատիչներ՝ 12 Ձայնի կարգավորիչներ՝ 2 (իմմական և լրացուցիչ) Ականջակալների հարակցիչ՝ 1 (XLR-4M կամ XLR-5F)</p>	հաստ	1,371,130.2	8,226,781.20	8,226,781.20	6	6	Ք.Երև ան, Գ.Հովս ելյան 26	6	Սույն պայման նագիրն ուժի մեջ մտնելու օրվանի 9 հաշվա ծ երեք ամսվա ընթաց քում /Եթե մատակ արարը չի հասնած այնվում մատակ արարել ավելի շուտ	1 տա րի
----	--------------	--------------------------------------	---------------------------------------	-----------------------------	---	------	-------------	--------------	--------------	---	---	---------------------------------------	---	--	---------------

5.	32321 210	110 սերիայի կոնդենսատորային գորային միկրոֆոն կանգնակի վրա	110 սերիայի կոնդենսատորային գորային միկրոֆոն կանգնակի վրա	Clear Com 110 Series Gooseneck Microphones	<p>Վահանակի միկրոֆոնի հարակցիչ 1 (3-pin)</p> <p>Վահանակի հետնամասի հարակցիչներ GPIO DB-25F</p> <p>Մատրիցա՝ RJ45 (միակապողիանոց) Մատրիցա (IP): RJ45 (բազմակապողիանոց) Լրացուցիչ առոփո՝ DB-25M Ընդարձակման վահանակ՝ RJ45 DC սնուցում՝ 4-pin DIN</p> <p>Ավանջակալների լրակազմի ձայն Ավանջակալների դիմարդությունը՝ սկսված 32 Ohm-ից Ելքային հզորությունը՝ 75 մՎտ 50 Ohm դեպքում <1% աղավաղման հասնալ</p> <p>Բարձրահոս Հաճախականային բնութագրի՝ 40Հց - 20ԿՀց +/- 3դԲ</p> <p>Վահանակի միկրոֆոնային մուտք Տեսակը՝ էլեկտրոն Մակարդակ՝ 40 - 70dBu Իմպեդանս՝ 1700 Ohm +/- 10%</p> <p>Ավանջակալի միկրոֆոնի մուտք Տեսակը՝ դինամիկ կամ էլեկտրոն Մակարդակ՝ -40 - 0dBu</p> <p>Հիմնական էլեկտրատնուցում (արտաքին) Լարումը՝ 100/240Վ AC +/- 10% Հաճախականությունը՝ 50 - 60 Հց Հզորությունը՝ առավելագույնը 50 Վտ /Clear Com V12PDX4Y-IP ի կրունն առկա Clear Com համակարգի/</p>	<p>հատ</p> <p>143,688.6</p> <p>1,149,508.80</p> <p>1,149,508.80</p> <p>8</p> <p>8</p> <p>Ք.Երևան, Հովնաթեյան 26</p> <p>8</p>	Սույն պայմանագրին ուղիղ մեջ մտնելու օրվանից հաշված երեք ամսվա ընթացքում	1	տարի
----	--------------	---	---	--	---	--	---	---	------

	<p>6. 32321 210</p> <p>1,9 ԳՀԳ անկար միջուկ իոնային կոպակիչն է բով</p> <p>1,9 ԳՀԳ անկար բով</p> <p>Clear Com FSII-BP19-X4- EU</p> <p>BAT60 Lithium Ion</p>	<p>1,9 ԳՀԳ անկար գոտիական բով – 2 հաս</p> <p>Սա ամուր, ջրակայուն գոտիական սարք է, որն աշխատում է առանց վիճեցիկայի 1,9 ԳՀԳ հաճախականային տիրույթում: Հատուկ տեխնոլոգիայի շնորհիվ այն օժտված է ճայիկ լայնաշերտ թողունակությամբ: Գոտիական բովը ունի չորս զանգի/սերու սերմավորձակ՝ ինտեգրված ձայնի մակարդակի պատվոլդ կարգավորիչով և աշխատացանկի սերմավորձակով: Օգտագործվում է՝ մակարդակի և կանչի ազդանշանի լուսադիոլային լուսավորում: XLR-4M ականջակայների հարակցիչ, USB DC լիցքավորման հարակցիչ, սերմակ գոտու վրա, ուսագոտի: Համատեղելի է FSII-Base և FSII-Base-II -ի, FreeSpeak Edge Base Station, Arcadia Central Station-ի E-IPA-HX քարտերի և FSII Splitter-ի հետ:</p> <ul style="list-style-type: none"> • Ներգործության հեռավորությունը՝ փակ տարածքում՝ 90 մ, ազատ տարածությունում՝ 240 մ • Գոտիական բովերը 1,9-ը համախոխարիների են մեկ համակարգում: • Կողակորիչի ձայնի փոխարկումը A&C-ի և B&D-ի միջև • «Կրկին լսիր» հատորագրության կրկնությունը • Հասարակ շահագործում ներքին կապի մեկ գոտիական բովում 	<p>հաս</p> <p>1,046,041.1</p> <p>2,092,082.40</p> <p>2,092,082.40</p> <p>2</p> <p>2</p> <p>2</p>	<p>Բ.Երևան, Գ.Հուլիս եկիյան 26</p>	<p>2</p>	<p>1 տարի</p>	<p>Սույն պայմանագիրն ընդգրկում է հաշվառման և հարկային ծախսերի հաշվարկի և հարկերի վճարման/երթնման ամսական արտադրանքի համաձայնագրով սահմանված պայմանները</p>
--	--	---	--	------------------------------------	----------	---------------	--

	<p>երկվապարզիանոց partyline-ից մինչև 5-կապաղիանոց</p> <ul style="list-style-type: none"> • Գոտիական բլոկի անկար գրանցում • 18+ ժամ ավտոնոմ աշխատանքի կամ էլ USB մատույց շարունակական աշխատանքի համար • XLR-4M հարակցիչ ականջակալների համար • Պաշտպանության աստիճանը IP53 խոնավ և փոշոտ պայմաններում <p>Տեխնիկական բնութագրեր</p> <p>Ատլիո</p> <p>Ձայնի թողունակության շերտը՝ 200 Հց - 7,5 կՀց</p> <p>Աշխատանքային ռեժիմ՝ Full duplex բոլոր երթուղիների համար</p> <p>Հաճախականային տիրույթ՝ 1880-1900 ՄՀց</p> <p>Հաղորդակի ելքային հզորություն՝ 250 մԿտ</p> <p>Միակցիչներ</p> <p>Ականջակալների հարակցիչ՝ 4- հպականոց շտեկեր, Clear-Com ստանդարտ, տարբերակներ PTT-ով 5- հպականոց բնիկի և 7- հպականոց շտեկերի</p> <p>Ականջակալների լրակազմի լարումը՝ առավելագույնը ~+8dBu</p> <p>Միկրոֆոնի տեսակը՝ էլեկտրոնոս և դինամիկ, ընտրվում է բլոկի աշխատացանկում</p> <p>Միկրոֆոնի լարումը՝ էլեկտրոնային միկրոֆոն՝ -45dBu:</p> <p>Դինամիկ միկրոֆոն՝ -55dBu</p> <p>Ականջակալների սահմանափակիչ՝ կարելի է ընտրել գոտիական բլոկի աշխատացանկից</p> <p>Հզորություն</p> <p>Մոդուլացիա՝ GFSK, TDMA</p> <p>Ելքային հզորությունը (եՄ/Ռուսաստան) միջինը 10 դԲմ</p> <p>Ներգործության հեռավորությունը փակ տարածքում՝ 90 մ, ազատ տարածությունում՝ 240 մ</p> <p>Կուտակիչ՝ Li-ion կամ 3 ավալիական էլեմենտ AA</p>	

8.	32321 210	Սլոանտար դ Ականջա կալների կրակազմ երկու ականջի	Սլոանտար Ականջա կալների կրակազմ երկու ականջի	ClearCo m CC-400	<p>Ուղղվածության դիագրաման՝ հիպերկարդիոիդ Հաճախականային բնութագրի՝ 300 Հց - 20 կՀց</p> <p>Չգայնություն Միկրոֆոնի գգայնությունը բաց շրջային պայմաններում՝ - 61dB ± 3,5 դԲ (0 դԲ = 1 Վ / 1 Պա, 1 կՀց, տիպային)</p> <p>Ականջակալների գգայնություն՝ 102 դԲ ± 3 դԲ (SPL)/1 սՎտ 1 կՀց, բնորոշ) Ինպլենդանս Ականջակալներ՝ 400 Օհմ ±30%; 1 կՀց - ի դեպում, տիպային Միկրոֆոն՝ 200 Օհմ ± 30%; 1 կՀց - ի դեպում, տիպային</p> <p>Միակցիչ Մարտն՝ 1,55 ս երկարությամբ՝ ականջակալի ծայրերին 8 հալականոց հարակցելով; 4- հալականոց XLR բնիկ /ClearCom CC-300 ի հավելումն առկա ClearCom հասակալոցին/</p>	հատ	211,787	423,756.00	423,756.00	2	2	Ք.Երևան, Գ.Հովսեփյան Եկիյան 26	2	Սույն պայմանագրին նագիրն ուժի մեջ մտնելու օրվանի ց հաշվա ծ երեք անսկա րնթաց քում /Եթե մատակ արարը չի հասնա նայվում մատակ արարել ավելի շուտ	1 տա րի
----	--------------	--	--	------------------------	---	-----	---------	------------	------------	---	---	---	---	--	---------------

- Բարձրորակ դինամիկ կարդիոլոյային միկրոֆոն:
 - Ականջակալներ՝ արմկանձնան բարձր մակարդակով
 - Միկրոֆոն՝ հաճախականային բնութագիր 300 Հց - 20 կՀց
 - Ականջակալներ՝ հաճախականային բնութագիր 40 Հց - 20 կՀց
 - Փափուկ կաշվե ծածկոց
 - Միկրոֆոնի դիրքը ճկուն «սագի վզիկ»-ի վրա
 - Միկրոֆոնի շրջադարձը կանգնակի վրա 300 աստիճանով՝ միկրոֆոնի միացման/անջատման համար
 - Անուր կոնստրուկցիա
- Տեխնիկական պայմաններ**

9.	32321 210	Ակտիվ ընդունիչ - հաղորդիչ ալեհավաք գոգիտական և բլոկերի համար	Ակտիվ ընդունիչ - հաղորդիչ ալեհավաք գոգիտական և բլոկերի համար	CleaeCom FSII-TCVR-IP-19 (IPT)	<p>Ականջակալներ Տեսակը՝ փակ Դրայվերներ՝ 40 մմ տրամագծով, ներդիմանային մագնիս, ձայնային կոճ պլանային ալյումինե մետաղալարից Հաճախականային բնութագի՝ 40 Հց - 20 կՀց</p> <p>Միկրոֆոն Տարող՝ դինամիկական Ուղղվածության դիագրամա՝ հիպերկարդիոիդ Հաճախականային բնութագի՝ 300 Հց - 20 կՀց</p> <p>Զգայնություն Միկրոֆոնի զգայնությունը բաց շրջային դեպքում՝ - 61dB ± 3,5 դբ (0 դբ = 1 վ / 1 Պա, 1 կՀց, տիպային) Ականջակալների զգայնություն՝ 98 դբ ± 3 դբ (SPL) / 1 մվտ 1 կՀց, բնորոշ)</p> <p>Իմպեդանս Ականջակալներ՝ 200 Օհմ ± 30%; 1 կՀց - ի դեպքում, տիպային Խտսափող՝ 200 Օհմ ± 30%; 1 կՀց - ի դեպքում, տիպային</p> <p>Միակցիչ Մալուխ՝ 1,55 մ երկարությամբ՝ ականջակալի ծայրերին 8 հալականց հարակցիչով: 4- հալականց XLR բնիկ /ClearCom CC-400 լրացում /առկա ClearCom համակարգին/</p>	1,651,201.20	1,651,201.20	1,651,201.20	1,651,201.20	1	1	Ք.Երևան, Գ.Հովսեփյան 26	1	Սույն պայմանագրին մտնելու օրվանից 9 հաշվաճ էրեք ամսվա ընթացքում /եթե մատակարարը	1	1
----	--------------	--	--	--------------------------------	---	--------------	--------------	--------------	--------------	---	---	-------------------------	---	---	---	---

	<p>Բլոկ և մինչև 64 ընդունող-հաջորդակների աշխատանք: IP-տրանսիվեր FSII 1,9 ԴԼԱ</p> <p>Համատեղելի է FreeSpeak Edge բազայի, Arcadia կենտրոնական կայանի և E-IPA-HX քարտի հետ</p> <ul style="list-style-type: none"> Պահանջվում է E-IPA-HX քարտ և Eclipse HX շրջանակ է AES67-ի հետ <p>Գործում է ցանցում IP-ով համատեղելի</p> <ul style="list-style-type: none"> Յուրաքանչյուր հաղորդիչ-ընդունիչ ապահովում է մինչև 10 FSII 1,9 Գ<g հաճախականությանը գոտիական բլոկի աշխատանք <p>Eclipse HX մատրիցային համակարգում ապահովվում է մինչև 64 հաղորդիչ-ընդունիչ անտենա:</p> <p>Ethercon RJ45 ցանցային միացումներ - 2</p> <ul style="list-style-type: none"> SFP FP բջիջները գերաբազ օպտոլոքիչի- 2 <p>Power over-Ethernet (PoE) մինչև 91 մ /300 ֆուտ/</p> <ul style="list-style-type: none"> կանաչ LED ցուցանշում վերևի և ներքևի կարգավիճակների IP53 վարկանիշ խոնավ և չոր պայմանների համար <p>Տեխնիկական բնութագրեր</p> <p>Հաճախականության սպեկտր՝ 1880-1900 ՄՀg (5 կապուղի)</p> <p>Տրանսիվերի ելքային հզորությունը՝ 250 մՎտ</p> <p>Ընդունող հաղորդակի ելքային հզորություն՝ 250 մՎտ</p> <p>Մոդուլացիա՝ GFSK, TDMA կարգ 10ms լրիվ և երկար սլոտ</p> <p>Սնուցում</p> <p>Ելք՝ 10 դԲմ միջինը</p> <p>Մուտք՝ 100-240VAC, 60/50Հg - 1.4Ա առավ.</p> <p>USB սնուցման արդյուր՝ 5Վ, 3Ա; առավելագույն էներգիայի սպառում = 12,5 Վտ</p> <p>Հավաքակցում</p> <p>Հետմանտի անրակապելը միկրոֆոնային կանգնակի համար են</p>	<p>ճի համաձայնվում մատակարարել ավելի շուտ</p>
--	--	---

					Միկրոֆոնի կանգնակի 5/8" և 3/8" պարուրակային բնիկներ Ամչակապեր անվտանգության գոտու համար Գնդիկավոր հողակապով միկրոֆոնի ադապտեր /CleaeCom FSII-TCVR-IP-19 (IPT) ի հավելումն առկա ClearCom համակարգին /										
--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

ԳՆՈՐԴ

«Հայաստանի հանրային
 հեռուստաընկերություն» ՓԲԸ
 Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք
 0011
 ՀՎՀՀ՝ 01540062
 «Արդշինբանկ» ՓԲԸ
 Հ/Հ՝ 2470102796740000

 /ստորագրություն/
 Կ.Տ



ՎԱՃԱՌՈՂ

«Թեքսերվ» ՍՊԸ
 Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, Գ1
 թաղամաս փ. 2, տ. 53
 Բանկ՝ րանկ ՓԲԸ
 Հ/Հ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
 Հ/Հ՝ 1570075047700100

 /ստորագրություն/



8.	32321210	Ստանդարտ ականջակալների լրակազմ երկու ականջի	0	0	0	0	0	0	0	0	423,756.00	423,756.00	423,756.00	423,756.00
9.	32321210	Ակտիվ ընդունիչ - հաղորդիչ ալեհավաք գոտիական բլոկերի համար	0	0	0	0	0	0	0	0	1,651,201.20	1,651,201.20	1,651,201.20	1,651,201.20

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
 Հասցե՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
 ՀՎՀՀ՝ 01540062
 «Արդշինբանկ» ՓԲԸ
 Հ/Հ՝ 2470102796740000

[Signature]
 /ստորագրություն/

Կ.Տ



«ԹԵԽՍԵՐՎ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, Գ1 թաղամաս փ. 2, տ. 53
 Բանկ՝ րանկ ՓԲԸ
 Հ/Հ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
 Հ/Հ՝ 1570075047700100

[Signature]
 /ստորագրություն/

